

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԻ ՔԱՆԻ ԳԵՏԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՈՒ

Վ. Գ. ԶԻԶԱՆՅԱՆ

Հայկական լեռնաշխարհի տեղանունների լեզվաբանական քննությանը նվիրված են մի շարք աշխատություններ: Ընդհանուր մի օրինաչափությամբ այդ երկերում գրեթե աչքաթող են արված գետանունները: Այնինչ հանրահայտ է, որ գետանունները առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ նրանք համեմատաբար ավելի շատ հին անուններ են պահում, քան այլ կարգի տեղանունները:

Աշխարհագրական առանձին տարածքների գետանունների ուսումնասիրությունները բացահայտել են գետանունների կազմության որոշ սկզբունքներ ու օրինաչափություններ: Չնայած Հայկական լեռնաշխարհի գետերի հին վկայված անունները սակավաթիվ են, իսկ որոշ դեպքերում, վկայված լինելով գրության այլ համակարգերով, հեռու են բնագրային ճշտությունից, այնուամենայնիվ ջրանվանագիտության այսօրվա վիճակը հնարավորություն է տալիս ձևականորեն Հայկական լեռնաշխարհի գետանունների ծագումնաբանական քննությանը:

Ստորև ներկայացնում ենք մի քանի գետանունների ստուգաբանության մեր փորձերը:

ԱՆԻՍՍ, ԱՆԻՍ—Փոքր Ասիայի խոշորագույն գետն է: Սկիզբ է առնում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում Փոքր և Բարձր Հայքերի սահմանում: Հայ մատենագրության մեջ վկայել են Մովսես Խորենացին և «Աշխարհացոյցը». Հունա-հռոմեական աղբյուրներում վկայված է մ. թ. ա. V դարից սկսած «Αἰνός, Halys ձևերով: Գետի հնագույն անունը՝ Maraššanta, Maraššantiša (գաղափարագիր ԻՎ.ՏԱՅ «Կարմիր գետ») վկայված է խեթական արձանագրություններում: Այժմ պաշտոնապես ռեզըլ ըրմաք (թուրք. Kızıl Irmak «Կարմիր գետ»):

Գետանվան ստուգաբանության երկու տարրեր փորձեր գտնում ենք հունական և բյուզանդական աղբյուրներում: Ըստ Ստրաբոնի գետը «Αἰνός է կոչվել իր ակերին գտնվող աղահանքերի պատճառով: Եվստաթեոսը առաքելում է այս ստուգաբանության դեմ, քանի որ ոչ բոլորն են գետանունը արտասանում թավ շնչով. առանց այդ շնչի արտասանողները անունը բխեցնում են αἰνός, «թափառում» բառից, որովհետև գետը հստակ է բազմաթիվ երկրներով¹:

Յու. Պոկոռնի գետանունը համարում է հայ. աղի (<հ. ե.՝ sal-«աղ» արմատից) բառի հունականացած ձևը: Գետանվան այս ստուգաբանությունը հավանական են համարում նաև Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը²:

Ուշադրության է արժանի խեթ. ԻՎ.ՏԱՅ «Կարմիր գետ» և թուրք. Kızıl Irmak «Կարմիր գետ» համապատասխանությունը: Եթե մի պահ անտեսենք ԻՎ.ՏԱՅ (Maraššanta, Maraššantiša)³—«Αἰνός—Kızıl Irmak շարքի մի-

¹ Այս տեղեկությունը քաղել ենք Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 58, прим. 1.

² J. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch. Bd. 1, Bern-München, 1959, S. 878 (այսուհետև Pok.). Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1984, с. 674, прим. 2.

³ Խեթ. Maraššanta կամ Maraššantiša անունը թե՛ քաղաքի, թե՛ դետի անուն է: Լարոնը զրույց է. «Խեթերը որոշելն է, թե՛ դե՞տն է անունը ավել քաղաքին, թե՛ հա-

լին օղակը ('Aλῶ, գետանունը), ապա ավելի քան երկու և կես հազար տարվա ընդմիջումից հետո գետը կրկին «կարմիր» անվանելը միայն մեկ տրամաբանական բացատրություն կարող է ունենալ՝ գետի հոսանքում որևէ առարկա (և կարևոր, ակնառու առարկա՝ ջուրը, ավազը, գետափի քարերը և այլն) կարմիր գույն է ունեցել և ունի: Հակառակ դեպքում երևույթը կմնա անբացատրելի: Թուրքական անունը խեթականի անմիջական թարգմանություն համարելը անհեթեթություն է:

Գետի ավազանում կարմիր գույն ունեցող առարկալի առկայությունը, առավել ևս բացակայությունը, ենթադրել է տալիս, որ 'Aλῶ անունը նույնպես «կարմիր» իմաստն է ունեցել: Այդ դեպքում գետանունը, ավելի ճիշտ, գետանվան հիմք հանդիսացած բառը կարող է ՚. և. *el-, *ol-, *al- «կարմիր, սրճագույն» արմատի որևէ ածանցյալ լինել: Հ. և. այս արմատից ածանցված են գույն նշանակող որոշ ածականներ հ. և. պատմական լեզուներում հնդ. aruṇa-ի «կարմրավուն, ոսկեդեղին», aruṣā-ի «հրագույն, հրակարմիր», ավ. aruša «սպիտակ», գերմ. *elwa «սրճագույն, դեղին», որից հրգ. elo (e'lawer), մբգ. el (elwer): Արմատի -i-, -n-, -m- հիմքերով ածանցյալներն ավելի հաճախ հանդես են գալիս ծառերի ու կենդանիների անուններում:

Ուշադրության են արժանի «լաստենի» նշանակությամբ բառերը, որոնք լայնորեն ներկայացված են եվրոպական լեզուներում, ինչպես՝ լատ. alnus (<*alsnos կամ *alenos նախաձևից), սլավ. *jelъcha (<*elisa, հուլդ. jelъcha, բուլղ. (j)elha), *olъcha (<*olisa, լեհ. olcha, ռուս. ольха), գերմ. *alisa (հրգ. elira, դրափոխությամբ՝ erila, նրգ. Elter, Erle): Գերմանական նախաձևը փոխառվել է ֆրանսերենում alise ձևով «ալոն» նշանակությամբ:

Ինչպես կարելի է նկատել, հ. և. արմատը -u- հիմքով հանդես է գալիս գույն նշանակող ածականների կազմության մեջ, իսկ -i- հիմքով՝ «լաստենի» անվանումներում (որպես «կարմիր ծառ»)՝ Քննության առարկա գետանունն իր -u- հիմքով հարում է ածականներին, այսինքն պետք է ունենար գույնի նշանակություն: Կարծում ենք, այն ունեցել է «կարմիր» իմաստը: Գետանվան ստեղծման էթնոլեզվական միջավայրը դժվար է որոշել, այն կարող է լինել խեթա-լուվական, փուլգիական, թերևս հայկական:

ԱՆՈՒՆԻՆ—Երասխի ձախակողմյան խոշորագույն վտակը: Հայ մատենագրության մեջ վկայված է V դարից սկսած: Անտիկ աղբյուրներին այս անունն անծանոթ է:

Կառավար. Marassant-ը իր հերթին ածանցված է Marassa-ից....., որն ըստ երևույթի պարունակում է «կարմիր» նշանակող մի ածականի հիմք» (E. Laroche. Etude de toponymie anatolienne.—Revue hittite et assyriologique, XIX, 69, Paris, 1961, p. 67): Ըստ Թ. Գամկրելիձի և Վ. Իվանովի Maraššanta-ն հ. և. *mar- «ծով, ճահիճ» արմատի ածանցյալն է՝ -ašša- և -anta- վերջածանցներով (T. B. Гамкрелидзе, В. В. Иванов. Указ. соч., с. 862).

⁴ P o k. SS. 302—304.

⁵ Լաստենու բնափայտը բաց գույնի է, սակայն օդի հետ շփումից կարմրում է (Большая советская энциклопедия, 2-ое изд. т. 31, с. 8), այնպես որ լաստենու անվան կապը հ. և. *el-«կարմիր» արմատի հետ պարզ է: Ի գեպ, այս ծառը թուրքերենում ևս կոչվում է «կարմիր ծառ» kızılğac: Հավանաբար այս արմատին է հարում նաև հայ. ալոն բառը, որը Հր. Աճառյանը համարում է փոխառություն արևելյան թուրքերենից (Հայերեն արմատական բառարան, Երևան, 1971, հ. 1, էջ 95):

⁶ Նույն Ախուրեան էր կոչվում այժմյան Կարսագետը մինչև Արփի լճից եկող գետի հետ խառնվելը և այնուհետև այժմյան Ախուրյանի ստորին հոսանքը՝ մինչև Երասխ (Ղ. Ալիշան. Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 4): Ալիշանի այս տեղորոշումը հետագայում հաստատվեց Ար-

Հայագիտական և ուրարտադիական գրականության մեջ նշվել է գետանուն և ուրարտական արձանագրությունների URUAburiani քաղաքի անվան կապը, սակայն տեղանվան ստուգաբանության փորձ չի կատարվել։ Որքան մեզ հայտնի է, առաջինը Գ. Ջահուկյանն է մատնանշել տեղանվան հավանական ծագումը հ. և. akv- «ջուր» արմատից ծագող աղբյուրից և համեմատել է պելասգ. (կամ թրակ.) 'Αχέρων, 'Αχελῆς, 'Αχελῷος գետանունների հետ։

Հ. և. *akv- արմատը անատոլիական (խեթա-լուական) և թուրա-կան լեզուներում պահել է բայական (նախնական) իմաստը՝ խեթ. eku-, պալ. aku-, լուվ. ahū-, թուր. AB yok- «խմել», իսկ -a հիմքով (*akva) «ջուր» իմաստով պահպանվել է եվրոպական լեզուներում՝ լատ. aqua, գոթ. ahva, հբգ. aha.⁸

Մեր տեղանվան ախու- (ahū-) հիմքը ներկայացնում է հ. և. արմատի՝ շրթնայնությունը պահպանած և բաղաձայնական տեղաշարժ կրած ձևը։ Նման արտացոլում ալն կարող էր ունենալ անատոլիական լեզվոլորտում։

Եթե ախու-ն իրոք հ. և. ծագում ունի, ապա -pawān (ուր. -riani)՝ հատվածը կարելի է դիտել որպես հ. և. *-ro-, *-lo/a- և *-no- ածանցների միացում։ Հ. և. *-ro- ածանցը կազմում է ածականներ, գոյականներ, ինչպես նաև բայանուններ⁹։ Տվյալ դեպքում կարելի է ենթադրել նրա բայանվանակերտ բնույթը։ *ahū- «խմել»→ahur- «խմելիք»→«ջուր»(?)։ Հմմտ. խեթ. et- «ուտել» (<հ. և. *eū-)→etri «ուտելիք»¹⁰։ Ի դեպ, հ. և. նույն արմատից *-lo- ածանցով է կազմված փոլուգ. աχալ «ջուր» բառը, ինչպես նաև բալկանյան (թրակա-պելասգ.) 'Αχελῷος, 'Αχελῆς գետանունները¹¹։ Սակայն նկատված է, որ հ. և. *-ro- և *-lo- ածանցները համազոր են և հաճախ հանդես են գալիս նույնական կազմություններում¹²։ Ըստ այսմ տեղանվան բուն հիմքը կլինի ախու- (ahur-) հավանական «ջուր» իմաստով։

Հ. և. *-io/a և *-no- ածանցները ածականակերտ են և հաճախ կազմում են հարաբերական ածականներ¹³։ այսինքն տվյալ դեպքում հավանական *ahur- (<հ. և. *akv-ro-) «ջուր» բառից կազմում են հավանական «ջրային», «ջրավետ» իմաստով ածական։ Այսպես կարող էր կոչվել ոչ թե գետը, այլ տարածքը, գուցե և բնակավայրը (հմմտ. URUAburiani Ախուրիանի քաղաք)։ Այդ պարագային գետանունը երկրորդական է՝ փոխանցված այլ տեղանունից։ Տեղանունն, ամենայն հավանականությամբ, անատոլիական էթնոլեզվական միջավայրում է ստեղծվել։

գիշտի I-ի Սարիղամիշի արձանագրությամբ Գ. Ա. Мелукишвили. Урартские клинообразные надписи. М., 1960, с. 257, № 130).

⁷ Գ. Բ. Джаукян. Хайасский язык и его отношение к индоевропейским языкам. Ереван, 1964, с. 70, прим. 130. Գ. Ջահուկյան. Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները. Երևան, 1970, էջ 97։

⁸ Pok., S. 23.

⁹ Э. Бенвенист. Индоевропейское именное словообразование. М., 1955, с. 65.

¹⁰ Т. В. Гамкрелдзе, В. В. Иванов. Указ. соч., с. 302.

¹¹ V. Georgiev. Introduction to the History of the Indo-European Languages.. Sofia, 1981, p. 130.

¹² Э. Бенвенист. Указ. соч., с. 65; Э. Туманян. Структура индоевропейских имен в армянском языке. М., 1978, с. 70.

¹³ Э. Туманян. Указ. соч., с. 64, 66.

ԳԱՅԼ—Այս անունով «Աշխարհացույցը» գիտեց երեք տարբեր գետեր.
 1) Պոնտական Կապադովկիայում, հունական աղբյուրների Թեքաճաճ, ավելի
 ուշ՝ Λύκος, այժմյան Քելքիթ գետը¹⁴, 2) Արևմտյան նփրատի վտակներից մեկը
 Բարձր Հայքում, այժմ՝ Քուզլա (?)¹⁵, 3) Արածանու վտակներից մեկը Տուրու-
 բերանում, «Աշխարհացույցի» Մեւս Գալլ գետը, այժմ՝ Քղի կամ Քելխաս (?)¹⁶։
 Թվում է, թե գետանունը ծագում է գալլ կենդանու անունից. հմմտ. Գալլ
 գետ—Λύκος (Քելքիթ), որտեղ հայկական և հունական անունները միմյանց
 թարգմանություն են։ Նկատի առնելով այն հանգամանքը, որ այս գետը հին
 աղբյուրներում կոչվել է Թեքաճաճ (*Ջերմագետ, *Գոլ կամ *Գաղջ գետ),
 և այն, որ բուն Հայաստանում ևս երկու Գալլ գետեր են եղել, ենթադրում
 ենք, որ հուն. Λύκος-ը թարգմանված է հայերենից (և ոչ հակառակը)։

Գետանվան ծագումը գալլ կենդանու անունից մեղ նվազ հավանական է
 թվում¹⁷։ Ուշագրություն են արժանի հ. և. *լեւ- «պտտել, ծոել», *լեւ «գը-
 նալ, ճանապարհ», *լեւս- «հալվել, հոսել», *լեւ- «սառք» արմատները։

Հ. և. *լեւ- «պտտել, ծոել» արմատից *լո- ածանցով է կազմված հուն.
 ὀλῆς «ծիածան» բառը, որից նաև ὀλῆς դիցանունը, որպես ծիածանի անձ-
 նավորում¹⁸։ Ուշագրավ է հունարեն այս բառի և ὀλῆς գետանվան (այժմ՝
 Նշիլ որսաք, որի աջակողմյան վտակն է Քելքիթը) նմանությունը։ Հ. և. այս
 արմատի, ածանցյալ է, հավանաբար, գալլ արմատը հայ. գալլուկ, գալլխոտ
 (պատատուկ բույսեր), գալլիկոն (շաղափ, պտտվելով ծակող գործիք) բա-
 ռերում։

Գէն—Ծրասխի աջակողմյան վտակ, սկիզբ է առնում Ավագ Մասսի հս.—
 ալ. լանջի մեծ վիհից։ Այժմ՝ Կարասու Միակ վկայությունը տալիս է Մովսես
 Խորենացին. «(Արտաշատ քաղաքի որսալ կինճս և իշավարիս զակամբք Գինայ...
 անկանի ի խոր իմն մեծ և խորասող լեւալ անհետի»¹⁹, Ղ. Ալիշանը, նրա հետե-
 վությունը նաև Ս. Ծրեմյանը, գետն անվանում են Գինեգոյն²⁰։ Ինչպես կարելի
 է եզրակացնել Խորենացու բերված քաղվածքից, գետանունը դրված է սեռա-
 կան հոլովով. ուղիղ ձևը պետք է լինի Գէն։

Հնարավոր է ենթադրել անվան ծագումը հ. և. *լեւս- «հալվել, հոսել»
 արմատից *լո-ա- ածանցով։ Հ. և. արմատը եվրոպական տարածքում հա-
 ճախ է հանդես գալիս գետանունների կազմում. Vlsa 1) Հոենսի աջակողմ-
 յան վտակ, այժմ՝ Wiese, 2) գետ Նորվեգիայում, 3) հին շվեդական գետա-
 նուն. Visera (Visara, Visura) 1) գետ Գերմանիայում, այժմ՝ Weser,
 2) գետ Մեծ Բրիտանիայում (Լանքաշիր), այժմ՝ Wyre, 3) գետ Ֆրանսիա-
 յում, Դորդոնի աջակողմյան վտակ, այժմ՝ Vèsère, 4) գետ Բելգիայում, այժմ՝

¹⁴ Ս. Ծրեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 100 (այսու-
 հետև՝ ԵՀԱ)։ Քսենոփոնը (Անարասիս. Երևան, 1970, էջ 124), ինչպես նաև էրատոսթենեսը
 (ըստ Ստրաբոնի հաղորդման. Օտար աղբյուրները հայերի մասին, հունական աղբյուրներ,
 1, Երևան, 1940, էջ 59) այս գետն անվանում են Թեքաճաճ։ Ստրաբոնը (նույն տեղում) սխալ
 է համարում այս և գետը կոչում է Λύκος։

¹⁵ ԵՀԱ, 106։

¹⁶ ԵՀԱ, 107։

¹⁷ Զնայած կարելի է համեմատել Λύκος (գետ Ալիևից արևմուտք. Քսենոփոն.
 Անաբասիս, էջ 142), ինչպես նաև Loup, Loue գետանունները Ֆրանսիայում (A. Dau-
 zat. Les noms de lieux. Paris, 1932, p. 195)։

¹⁸ Pok., S. 1122.

¹⁹ Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց. Բ, 61։

²⁰ Ղ. Ալիշան. Այրարատ, էջ 461; ԵՀԱ, էջ 47։

Weser²¹), Vistula (հռոմեական աղբյուրներում), այժմյան սլավ. Vísła <գերմ. *Wistlo-ից²²,

Գետանվան համար մեր առաջարկած նախաձեռնը կազմութիւմը համապատասխանում է լատ. vena (<*veisnā) «երակ» բառին:

ԵՐԱՄԽ—Առաջավոր Աօրայի խոշոր գետերից մեկն է, որն իր ողջ հոսանքով պատմական Հայաստանի տարածքում է գտնվում: Հալ մատենագրության մեջ ամենահաճախ հիշատակվող գետանուններից մեկն է (V դարից մինչև XIX դարը ներառյալ): Հնագույն վկայությունները գտնում ենք հունա-հռոմեական աղբյուրներում ('Արափ', Araxes): Հունա-հռոմեական ավանդույթն այժմ պաշտոնական ճանաչում է գտել և գետը կոչվում է Արտքս:

Գետանվան ստուգաբանութ. ան պոստիւմ փորձն, ըստ երևութիւն, Սուրբ Բոնիֆն է. ճշմարտում են, թե Արայի(ը ալսպես է յոչված Պեննոս (գիտի) նմանության պատճառով, և ալս անունը տվել է նրան Արմենոսը (Պեննոսը ես նախապես) կոչվել է Արաքս, որովհետեւ խել է (ἀραξάξαι) Օսոս լեռը 'Օլիմպոսից' ճեղքելով ('ῥαξάξαι) ճեմպե (հովիտը)²³, Ալս հատվածից երևում է, որ Սարաբոնը գետի հուն. 'Արափ' անունը մեկնաբանում է հուն. ἀραξάξω ժիւիւ և ἀραξά «ճեղքել» բառերով: Նման փորձեր (օտար տեղանունների մեկնաբանություններ հունարենով) հանդիպում են հույն հեղինակների, մասնավորապես Ստրաբոնի մոտ: Մովսես Խորենացին, որ գրեթե ամենուր ձգտում է բացատրել տեղանունների ծագումը, հայկ. Երասխ անունը համարում է Արամայիսի թոռան՝ Երաստի անունից առաջացած²⁴, Ստուգաբանության այս փորձերը, իհարկե, պետք է դիտել որպես ժողովրդական:

Գետանվան նոր ստուգաբանությունները այն կապում են իրանական լեզվաընտանիքին:

1. Երասխ գետանունը առաջացել է ուրարտական արձանագրությունների 'Erlahի երկրանունից (ցեղանունից, որին Ս. Երեմյանը վերագրում է սկյութական ծագում): Մ. Նիկոլսկու և Ս. Երեմյանի այս կարծիքը փորձում է հիմնավորել Հ. Կարազյոզյանը. «ուրարտ. 'Erlah>հալ. *Երախս (հոգնակի թվի հայցական հոլովի վերջածանցով)>Երասխ, -իւս>-սիւ դրամիսութիւմը, քանի որ նախկին *Eraxs ձևից վերոհիշյալ -իւս>-սիւ>-է- օրենքով հունարենում այս անունը հալտնի է որպես 'Արափ'²⁵:

2. Վ. Ալլերսը, հենվելով գետանվան հունական տարբերակի վրա, գրտնում է, որ այն հարում է «սև գետ» կարգի դետանուններին, ինչպես՝ Schwarzach, Rio Negro, թուրք. Karasu: Սուտի 'Արափ գետանունը նա վերլուծում է իր. a-raxša «ոչ փալլուն»²⁶:

²¹ H. Krahe. Die Struktur der alteuropäischen Hydronomie (Akademie der Wissenschaften und der Literatur. Abhandlungen der Geistes- und Sozialwissenschaftlichen Klasse. Wiesbaden, 1962, № 5), SS. 340—341.

²² Рок., S. 1134.

²³ Ստրաբոն, էջ 63:

²⁴ Մովսես Խորենացի, Ա, 12:

²⁵ О. Карагезян. Локализация урартского царского города Арцахку.—Вестник общественных наук АН АрмССР, 1976, № 5, с. 93.

²⁶ W. Eilers. Geographische Namengebung in und um Iran (Bayerische Akademie der Wissenschaften. Philosophisch-historische Klasse, 1982, H. 5, S. 35).

3. Կորյունի հիշատակած Ռահ գետը Երասխն է և նույնն է Ավեստայի սըր-բազան Rāhha գետի հետ: Այս տեսակետն է զարգացնում Ա. Մնացականյանը²⁷:

Նախքան այս կարծիքների քննությանն անցնելը, նշենք գետանվան՝ աղբյուրներում վկայված ձևերը. հունա-հռոմեական՝ Ἀράξης, Araxes, հայ. Երասխ, վրաց. (հնագույնը XI դարից) Raxsi: Ինչպես երևում է, վրացական տարբերակը հակադրվում է հունա-հռոմեականին և հայկականին նախաձայն (հավելվածակա՞ն) ե/ա ձայնավորի բացակայությամբ, նույնանում է հունա-հռոմեականին -xs- բաղաձայնական կապակցության հերթականությամբ, այդ կետում տարբերվելով հայկականից: Հունա-հռոմեականը և հայկականը հակադրվում են նախահավելված ձայնավորի բնույթով՝ հուն.-հռոմ. a- :: հայ. ն, ինչպես նաև բաղաձայնական կապակցության հերթականությամբ՝ հուն.-հռոմ. -xs- : հայ.-սխ-:

Եթե ընդունենք առաջին տեսակետը, ապա, մեր կարծիքով, անբացատրելի է մնում վրացականում նախահավելվածի բացակայությունը: Այնուհետև՝ կասկածելի է տեղանվան կազմությունը հոգնակի հայցականի ս ածանցով: Այն տեղանուններում հանդես է գալիս միջնադարում՝ նախկին Բ՝ հոգնակերտի փոխարեն (հաճախ զուգահեռ ձևերում):

Եթե ձիշտ է երկրորդ տեսակետը, ապա տարօրինակ է, որ իրանականի a- ժխտական ածանցը (որ ունենք հայերենում իրանականից փոխառյալ ալա-մալ բառի մեջ) վեր է ածվել ե-ի: Մասնավորապես, նախաձայն ե/ա հնչյունական տարբերակների օրինակները, որ բերում է Հ. Կարապոզյանը, նախահավելվածների օրինակներ են²⁸: Տարօրինակ է նաև իր. xs > հայ. սխ անցումը՝ օրինաչափ շխ-ի փոխարեն²⁹:

Ընդունելով Ա. Մնացականյանի Երասխ—Ռահ նույնացումը՝ հարկ ենք համարում նշել, որ իր. Rāhha-ից հնարավոր չէր Երասխի առաջացումը:

Կարծում ենք, որ Երասխ գետանունը հ. ե. *eres-: *eros-: *ers- «հո-նել, թափվել» արմատի ածանցյալն է -*k-, *-kh- ածականով կամ *-ko-, *-kho- ածանցով: Կազմություն համար հմմտ. լատ. roridus «ցողոտ, խոնավ» *rosidus նախաձևից և լատ. roscidus (նույնը) *roskidus նախաձևից: Հ. ե. այս արմատից են ծագում իր. Rāhha, վեդ. Rasa³⁰ (գետ արիսկան ցեղերի նախահայրենիքում, ոմանք նույնացնում են Վոլգայի հետ), Պտղոմեոսի՝ Քհ, «Ալեքսանդրացի» Ռահ գետն է) գետանունները: Վ. Գեորգիևը այս արմատից է բխեցնում նաև 'Γέρασος, Gerasus³¹ (ալժմ՝ Սիրետ, Դանաբի ձախակողմյան հզոր վտակներից մեկը Ռումինիայում), 'Ερξάνης³² (հինգ տարբեր գետեր հին Հունաստանի Ատտիկե, Արգոլիդա, Էրիտրեա, Արկադիա մարզերում), Rosica կամ Rosita³³ (Յանտրա գետի ձախակողմյան վտակը Բուլղարիայում, Դանուբի ավազանում) անունները:

27 Ա. Մ. Մնացականյան. Ռահ-Արաքս-Rāhha.—ՉՅՄՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1981, № 11, էջ 86—93:

28 О. Карагезян. Указ. соч., с. 70.

29 Ի գետ, իր. raxš- «կարմրերանգ, խայտաճամուկ» բառը արդեն մեկ անգամ փոխառվել է հայերենում Երաշխ ձևով (միակ վկայությունը XI դարից է. բայց բառն անկասկած հին փոխառություն է):

30 Pok., S. 336.

31 V. Georgiev. Introduction..., p. 134, 330.

32 նույն տեղում, էջ 154, 341:

33 նույն տեղում, էջ 341:

Գետանունի համար մեր առաջարկած նախաձեռնից $*(e)res-k/kho-$ հայկական սպասելի էր *երևց կամ *երնշ: Հ. հ. *sk, *skh > sx անցումը, ինչպես նաև գետանունի ծագումը, հավանաբար պետք է որոնել անաառիական լեզվաընտանիքում³⁴:

ЭТИМОЛОГИЯ НЕКОТОРЫХ РЕЧНЫХ НАЗВАНИЙ АРМЯНСКОГО НАГОРЬЯ

В. Г. ДЖИГАНЯН

Резюме

В армянской топонимической литературе вопросы этимологии речных названий Армянского нагорья специально не рассматривались, лишь в различных работах вскользь затронуты некоторые названия.

В настоящей статье, исходя из достижений современной гидронимии, рассмотрены пять речных названий: Апис, Ахуреан, Гайл, Гэн, Ерасх. В соответствии с историко-лингвистическим анализом все эти пять гидронимов имеют индоевропейское происхождение. В статье сделана попытка восстановления индоевропейских праформ данных гидронимов.

34 Գ. Հայկական ենթադրում է Հ. հ. *skh > իր. sx անցումը. Գ. Ժառուկյան. Об этимологии дублетов и параллелей в армянском языке (տե՛ս Միշակյանի հայերենագիտական գիտաժողով. գեկույցումներ, Երևան, 1984, էջ 160):